## ԸՆԹԵՐՑՈՂՆԵՐԷՆ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Իրագլիոն (Կրետէ), 15-4-1959

Պատուարժան Խմբագրութիւն
«Սիոն» պաշտօնական ամսագրի

Երուսաղէմ

Շատ յարգելի եւ սիրելի հայր Խմբագիր,

Հանոյքով եւ խորին շնորհակալութեամբ ստացայ «Սիոն»ի Յունուար եւ Փետրուար միացեալ թիւերը, զոր բարեհաճած էք ինծի ղրկելու՝ այնքան բարութեամբ եւ ազնուութեամբ:

Անոնց ընթերցումը ինծի համար եղաւ իրական խնճոյք մը՝ հոգեպարար եւ ուսանելի. էջերը զարդարուած էին մէկը միւսէն աւելի քաղցր, նուրբ եւ համեղ խորհուրդներով՝ որոնք մտքի սնունդ եւ հոգիի բաւարարութիւն կը ջամբեն իրաւամբ:

Շատոնց կը փափաքէի «Սիոն»ի ընթերցումը վայելել, բայց նիւթական պատճառներ արգելք էին եղած այս բաղձանքին իրագործման. հազար փա՜ռք Ամենակալին որ ստիպն է ամենայն բարեաց, եւ անհուն շնորհապարտութիւն մեղուաջան Միաբանութեանն Ս. Յակոբեանց սրբոց եղբարց, որ հիանալի արիութեամբ, հաւատարմութեամբ եւ անձնուէր զոհողութեամբ կը պահպանէ եւ կը բարգաւաճէ Ս. Տեղեաց ազգ. սեփականութիւնները որոնք իրաւ՝ պարծանքներ են Ազգիս Հայոց:

Այս առթիւ, մէկ քանի հակիրճ թռուցիկ ակնարկներ աւելորդ չեմ համարիր գրի առնել տեղւոյս հայ համայնքին վերաբերմամբ: Իրագլիոն Կրետէ կղզիի ամենէն վաճառաշահ կեդրոնն է. իսկ Կրետէն՝ Հելլենական քաղքին ամենէն փայլուն գոհարներէն մէկն է: Հոս կար հին դարերէն հաստատուած հայ գաղութ մը, որ աւա՜ղ, ժամանակի գլանը մաշեցուցած եւ անհետացուցած է զայն: Այսօրուան գաղութը նոր ժամանակներու մէջ հաստատուած է, ունինք 30-35 ընտանիքներ՝ նիւթական քիչ շատ բաւարար վիճակով. ունինք կոկիկ քարաշէն եկեղեցի՝ որ 300 տարուան հնութեան դրոշմը կը կրէ: Առանց հերքուելու երկիւղ ունենալու կարող եմ հաւաստել որ ամուր բերդ մը դարձած է ան ընդդէմ կործանարար ամէն տեսակի ժխտական ազդակներու:

Որպէսզի կը մաղթեմ Ձեզ կարողութիւն եւ քաջառողջութիւն՝ միշտ քաջաբար վարելու համար Ձեր բեղուն գործը՝ յօգուտ Ազգիս եւ ի պայծառութիւն Հայ Առաք. Ուղղափառ Ս. Եկեղեցւոյ:

Մնամ աղօթակից

Հոգ. Հովիւ Համայնքին Հայոց Կրետէի

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԽԱՉԱԿԻՐ ՔՀՆՅ. ՎԱՐԴՈՒԿԵԱՆ

## Ս. ՅԱԿՈԲԻ ՆԵՐՍԷՆ

### ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

*Վեհափառ Թագաւորի արտասահմանէն ապահով վերադարձին առթիւ, հետեւեալ շնորհաւորական հեռագիրը ղրկուեցաւ Արքունի Դիւանատան, Գերշ. Տ. Սուրէն Արքեպս.ի կողմէ, Մայիս 2ին:*

«Նորին Վեհափառութիւն Մեծն Հիւսէյն Թագաւորի իր սիրեցեալ երկիրը յաղթական եւ ապահով վերադարձին առթիւ, յանուն Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան եւ Յորդանանու Հայ համայնքին, կ'առաքենք Նորին Վեհափառութեան մեր ամենէն անկեղծ ուրախութիւնը բարիգալուստի եւ հաւատարմութեան, եւ կ'աղօթենք Ամենակալ Աստուծոյ, այս առթիւ, պահպանել Նորին Վեհափառութիւնը եւ իր Գահը՝ իբրեւ ապաստան Երկրին եւ Արաբ Ժողովուրդին»:

* * *

*Պաշտօնաթերթիս բարեմիտ եւ պատուական մէկ բարեկամը հետեւեալ նկատողութիւնը կ'ընէ կապակցութեամբ մեր այն յայտարարութեան թէ «Արտասահմանի բոլոր Թեմական Հայրերուն նուէր կը ղրկուի Սիոն պաշտօնաթերթը, եթէ իրենց հասցէները մեզի ղրկուին»:*

«Ներեցէք որ առարկեմ պաշտօնաթերթիդ ետեւի կողքին վրայ դրուած բոլոր Թեմակալաց Սիոն նուէր ղրկելու Ձեր առաջարկին: Արտասահմանի մէջ տասնեակներով Թեմական Հայրեր կան որոնք կրնան տալ եւ սիրով կուտան տարուան մը բաժնեգին Սիոնի պէս հրատարակութեան մը՝ որ իրենց կը ջամբէ ամբողջ տարուան ընթացքին մտքի եւ հոգիի սնունդ»:

*Խմբագրութիւնս կը պատասխանէ. Վերոյիշեալ յայտարարութիւնը կը վերաբերէր յատկապէս բոլոր այն Թեմական Հայրերուն՝ որոնք Սիոն չէին ստանար ցարդ: Անոնք պատուական փաղանգ մը Թեմական Հայրերու՝ որոնք Սիոն կը ստանան եւ կանոնաւորաբար կը վճարեն իրենց բաժնեգինները: Անոնք որոնք բացառիկ զոհողութեամբ կ'ընէին բարոյական այս պարտաւորութեան կատարումը, Սիոն զղջած պիտի չըլլայ եթէ անոնք իրենց այդ զոհողութիւնը յատկացնեն իրենց ընտանիքներուն եւ իրենց մտքի բարգաւաճման: Իսկ անոնք որ, ըստ սիրելի նամակագրի հաւաստումին, «կրնան տալ եւ սիրով կուտան տարուան մը բաժնեգին», վստահ ենք որ պիտի շարունակեն իրենց վճարումները, եթէ ոչ անպատճառ իբրեւ բաժնեգին՝ գէթ նպաստ բարգաւաճման Սիոնի»:*

digitised by A.R.A.R.@

*Յորդանանու Անկախութեան տօնին, Մայիս 25ին, Վեհ. Թագաւորին ղրկուեցաւ հետեւեալ հեռագիրը՝ Սուրէն Սրբազանին կողմէ.*

«Անկախութեան տօնին առթիւ, ես, իմ կողմէս եւ յանուն Ս. Յակոբեանց Ուխտին եւ Յորդանանու հայ համայնքին, յարգանօք կը յայտնեմ իմ խոր հաւատարմութիւնս Ձերդ Վեհափառութեան, եւ կը խնդրեմ Ամենակալ Աստուծմէ շնորհել Ձեր Վեհափառութեան երկար, բարգաւաճ եւ յաղթական իշխանութիւն»:

*Որուն ի պատասխան ստացուեցաւ հետեւեալ հեռագիրը՝ Մայիս 30 թուակիր.*

«Շնորհակալ եմ Ձեր անկեղծ շնորհաւորութեանց եւ մաղթանքներուն համար, Յորդանանու անկախութեան տօնին առթիւ»:

ՀԻՒՍԷՅՆ

---

*Յունիս 5ին, Վեհափառ Թագաւորի հիւանդութեան առթիւ, Գերշ. Տ. Սուրէն Սրբազանի կողմէ հետեւեալ հեռագիրը ղրկուեցաւ Արքունի Դիւանապետին.*

«Անձկութեամբ իմացանք Նորին Վեհափառութեան հիւանդութիւնը: Հաճեցէք հաղորդել Նորին Վեհափառութեան, իմ կողմէս եւ յանուն Ս. Յակոբեանց Միաբանութեան եւ Յորդանանու հայ համայնքին, մեր հաւատարմութեան եւ նուիրումի խոր հաւաստիքը, եւ մեր սրտագին մաղթանքները՝ իր արագ եւ լիակատար ապաքինման համար: Ջերմեռանդօրէն կ'աղօթենք որ Ամենակալը Իր պաշտպանութեան ներքեւ առնէ Նորին Վեհափառութիւնը եւ շնորհէ անոր երկար, երջանիկ եւ բարգաւաճ կեանք»:

---

*Իսլամաց Գուրպան պայրամի առթիւ, հետեւեալ հեռագիրը ղրկուեցաւ Ն. Վեհ. Հիւսէյն Թագաւորին, Գերշ. Տ. Սուրէն Արքեպս.ի կողմէ, 16 Յունիսին.*

«Յանուն Ս. Յակոբեանց Միաբանութեան եւ Յորդանանի մէջ ապրող հայ ժողովուրդին, **Ատհա** տօնին առիթով, Ձերդ Վեհափառութեան կը ներկայացնենք մեր ամենաջերմ շնորհաւորութիւնները, յայտնելով նաեւ մեր հաւատարմութիւնը»:

*Որուն ի պատասխան ստացուեցաւ հետեւեալ հեռագիրը՝ 22 Յունիսին.*

«Շնորհակալութիւն կը յայտնեմ Ձեր ազնիւ շնորհաւորութեանց եւ բարեմաղթութեանց համար՝ զորս ղրկած էիք **Ատհա** տօնին առթիւ: Կը հայցենք Բարձրեալէն որ յիշեալ տօնը տայ Արաբ ժողովուրդին յաջողութիւն եւ ուրախութիւն»:

ՀԻՒՍԷՅՆ

## ԵԿԵՂԵՑԱԿԱՆՔ – ԲԵՄԱԿԱՆՔ

● *Եշ. 23 Ապրիլ. — Իրիկուան ժամը 6.30ին, Մայր Տաճարին մէջ պաշտուեցաւ Մեծ Պահոց «Եկեսցէ»ի վերջին ժամերգութիւնը՝ որու ընթացքին Գերշ. Տ. Շնորհք Եպս. աւարտեց ընթերցումը և յարակից բացատրականը Գործք Առաքելոց գրքին՝ որուն սկսուած էր 6-7 ամիսներէ ի վեր.*

● *Շբ. 25 Ապրիլ.* — Յիշատակ յարութեան Ղազարու: *Ս. Գլխադրի մատրան մէջ մատուցուած Ս. Պատարագի ընթացքին, Ս. Թարգմ. Վարժարանի բովանդակ ուսանողութիւնն ու ուսուցչական կազմը, ինչպէս նաև օտար վարժարաններու հայ ուսանողներ, ստացան Ս. Հաղորդութիւն.*

*— Կէսօրէ վերջ, Գերշ. Տ. Սուրէն Արքեպս.ի գլխաւորութեամբ, Միաբանութիւնը «Հրաշափառ»ով մուտք գործեց Ս. Յարութեան Տաճար, ուր պաշտուեցան երեկոյեան ժամերգութիւնն ու Ծաղկազարդի նախատօնակը՝ մեր վերնամատրան մէջ. Ապա կատարուեցաւ Տնօրինական Սրբատեղեաց այցելութեան հանդիսաւոր թափօր Տաճարէն ներս. Թափօրապետն էր Պէյրութէն հիւրաբար Ս. Աթոռ ժամանած Հոգշ. Տ. Վաչէ Վրդ. Յովսէփեան.*

● *Կիր. 26 Ապրիլ.* — Ծաղկազարդ: *Գիշերային և առաւօտեան ժամերգութիւնները պաշտուեցան և Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Յարութեան Տաճարի մեր վերնամատրան մէջ. Պատարագիչն էր Հոգշ. Տ. Վաչէ Վրդ. Յովսէփեան. Ապա, Գերշ. Տ. Սուրէն Արքեպս.ի գլխաւորութեամբ, կատարուեցաւ մեծահանդէս թափօր Քրիստոսի Ս. Գերեզմանին և Պատանատեղւոյն շուրջ. Թափօրականք ի ձեռին ունէին ձիթենեաց և արմաւենեաց ոստեր, իսկ մեր թափօրին կը հետևէին Ղպտոց և Ասորւոց թափօրները. Ժամը 1.30ին, Միաբանութիւնը շքերթով վերադարձաւ Մայրավանք, ու Հայոց Թաղի մուտքէն «Ով զխորհուրդ» շարականը երգելով բարձրացաւ Պատրիարքարան՝ ուր Գերշ. Տ. Սուրէն Արքեպս. «Պահպանիչ»ով օրհնեց ու արձակեց հաւատացեալ և ուխտաւոր ժողովուրդը.*

*— Կէսօրէ վերջ, շքեղօրէն զարդարուած Մայր Տաճարին մէջ կատարուեցաւ նախ «Անդաստան», և պաշտուեցաւ երեկոյեան ժամերգութիւն՝ հոգեզմայլ շարականներով ընդմիջուած. Ապա կատարուեցաւ «Դռնբացէք»ի սրտայոյզ արարողութիւնը. Հանդիսութեանց կը նախագահէր Գերշ. Տ. Սուրէն Արքեպս.. Այս առթիւ, Հոգշ. Տ. Հայկազուն Վրդ. քարոզեց, շեշտելով բարեգործութեան առաքինութիւնը, և կոչ ուղղեց որ յաւարտ պաշտամունքի, եկեղեցւոյ մուտքին՝ ի նպաստ Ազգային Բուժարանին դրուած սնտուկներուն նուիրահաւաքութեան մասնակցին առատաձեռն կերպով. Կարդացուեցաւ վարագոյրներու բացման մասնակցող բարեպաշտ ուխտաւորաց անուանացանկը, որմէ ետք կատարուեցաւ վարագոյրներու բացման արարողութիւնը.*

digitised by A.R.A.R.@

● Գշ. 28 Ապրիլ. — Աւագ Երեքշաբթի: Ըստ սովորութեան, Ս. Պատարագ մատուցուեցաւ Ս. Յարութեան Տաճարի բակի մեր Ս. Յովհ. Աւետարանչի մատրան մէջ: Ապա կատարուեցաւ Տնօրինական Սրբատեղեաց այցելութեան հանդիսաւոր թափօր Ս. Յարութեան Տաճարէն ներս: Թափօրապետն էր Հոգշ. Տ. Կիւրեղ Վրդ. Գաբրիէլեան: Թափօրի իւրաքանչիւր հանգրուանին ուխտաւորաց տրուեցան բացատրական քարոզներ՝ Հոգշ. Հայրերու կողմէ:

● Եշ. 30 Ապրիլ. — Աւագ Հինգշաբթի: Առաւօտեան ժամերգութեան աւարտին, Մայր Տաճարին մէջ կատարուեցաւ «Կարգ Ապաշխարողաց»: Ապա, կարճ դադարէ մը ետք, մատուցուեցաւ հանդիսաւոր Ս. Պատարագ՝ Աւագ Սեղանին վրայ: Պատարագիչն էր Գերշ. Տ. Շնորհք Եպս.: Կարդացուեցաւ Ս. Բարսեղ Հայրապետի Հաղորդութեան ճառը, գերազանցօրէն վեհ և շինիչ խրատներով լի: Մեծ թիւով հաւատացեալներ մասնակցեցան Հաղորդութեան մեծ խորհուրդին:

— Կէսօրէ վերջ, Մայր Տաճարին մէջ, Գերշ. Տ. Սուրէն Արքեպսկ.ի նախագահութեամբ կատարուեցաւ «Ոտնալուայի արարողութեան կարգը»: Ներկայ էր խուռն բազմութիւն ժողովրդեան: Եկեղեցւոյ դասը լեցուն էր օտար բարձրաստիճան հիւրերով և հրաւիրեալներով, ընդ որս և Երուսաղէմի Վսեմ. Կառավարիչը, Վսեմ. Մութասարրըֆը, Քաղաքիս Զինուորական և Ոստիկանական հրամանատարները, ինչպէս նաև Ս. Տեղեաց և Հին Քաղաքի Ոստիկանապետը և զանազան պետութեանց Հիւպատոսներ: Արարողութեանց աւարտին, ըստ սովորութեան, Անգլիքան Գերշ. Արքեպս.ը, եպիսկոպոսական զգեստաւորմամբ, Աւագ Սեղանի բեմէն, Անգլերէն լեզուով կարդաց Ս. Աւետարանէն Ոտնալուայի վերաբերեալ համարները: Ամբողջ արարողութիւնը Իտալական Կառավարութենէն ղրկուած մասնաւոր ընկերութեան մը կողմէ շարժանկարի առնուեցաւ:

— Ժամը 5ին, փոքր թափօր մը մեկնեցաւ Ս. Հրեշտակապետաց եկեղեցին (Ա. բանտ Քրիստոսի), ուր կատարուած Ս. Աւետարանի ընթերցումէն ետք, թափօրը ուղղուեցաւ դէպի տաճարի բակին մէջ գտնուող Ս. Ձիթենիի ծառը: Թափօրը կը գլխաւորէր վանուց Տեսուչը՝ Հոգշ. Տ. Կորիւն Վրդ.: Ս. Ծառին առջև եւ կատարուած Աւետարանի ընթերցումէն ետք, Հոգշ. Տ. Թորգոմ Վրդ. խօսեցաւ քարոզ մը՝ վանքին տանիքներն ու բակը խռնուած բազմահարիւր ժողովուրդին, անդրադառնալով Փետրոսի ուրացումին ու անոր յաջորդող զղջումին՝ որ զինքը վերահաստատեց իր նախկին դերին մէջ, մինչ Յուդա դիմեց անձնասպանութեան: Հոգշ. Հայրը տուաւ նաև նոյն վանքին պատմականը:

— Գիշերուան ժամը 7էն մինչև 12, Մայր Տաճարին մէջ կատարուեցաւ «Խաւարման Կարգը»՝ տխրազդեցիկ խորհրդաւորութեամբ: Հոգշ. Տ. Վաչէ Վրդ. քարոզով մը վեր հանեց «լացի գիշեր»ուան փրկարար նշանակութիւնը:

● Ուր. 1 Մայիս. — Աւագ Ուրբաթ: Կէսօրէ վերջ ժամը 12.30ին, Ս. Յարութեան Տաճարի մեր վերնամատրան մէջ կատարուեցաւ «Խաչելութեան Կարգը»՝ Հոգշ. Տ. Կիւրեղ Վրդ.ի նախագահութեամբ:

— Կէսօրէ վերջ ժամը 4ին, Մայր Տաճարին մէջ պաշտուեցաւ հանդիսաւոր «Թաղման Կարգը»՝ Գերշ. Տ. Սուրէն Արքեպս.ի նախագահութեամբ:

● Շբ. 2 Մայիս. — Ճրագալոյց Ս. Զատկի: Առաւօտեան ժամը 8.30ին, ըստ սովորութեան, Ս. Յարութեան Տաճարի դուռը բացուեցաւ մեր կողմէ: Ժամը 10ին, Գերշ. Տ. Սուրէն Արքեպս.ի գլխաւորութեամբ, Միաբանութիւնը մեկնեցաւ Ս. Յարութեան Տաճար, ուր յաջորդաբար տեղի ունեցան «Լուսաւորեալ»ի հանդիսութիւնն ու մեծահանդէս թափօրը: Ժամը 12.30ին, Յունաց Ս. Գերեզմանին շուրջ կատարած եռապարձ թափօրէն յետոյ, Յունաց Ամեն. Ս. Պատրիարքն ու մեր Լուսահանը՝ Հոգշ. Տ. Հայկազուն Վրդ., զգեստաւորեալ, մտան Ս. Գերեզման, որուն քովէն բացուած քներէն, քիչ ետք, նուիրական լոյսը դուրս պիտի գար ու ակնթարթի մը մէջ պիտի փոխանցուէր մեր վերնատան պատշգամին մէջ իր տեղը գրաւող Գերշ. Տ. Սուրէն Սրբազանին՝ որ անով կ'օրհնէ վարը խռնուած բազմազգի ու բազմահազար հաւատացեալներու ամբոխը: Ընդհանուր խանդավառութեան մէջ սկսան հնչել Տաճարին յունական և հայկական բոլոր զանգերն ու կոչնակները, մինչ վարը, Ս. Գերեզմանի շրջափակին մէջ, ընթացք կ'առնէ մեր եռապարձ թափօրը, գլխաւորութեամբ Հոգշ. Լուսահան Հօր՝ որ կը կրէր խոյր եպիսկոպոսական: Մեր թափօրին կը հետևէին Ղպտոց և Ասորւոց թափօրները: Նոյն մեծահանդէս արարողութիւնները տևեցին մինչև ժամը 2 կ. վ., որմէ ետք Միաբանութիւնը շքերթով ճամբայ ելաւ դէպի Մայրավանք: Դաւիթ բերդին դիմաց, Գերշ. Սրբազանն ու Հոգշ. Լուսահանը զգեստաւորուեցան, մինչ դպիրները սկսան «Քրիստոս Յարեաւ» շարականը երգելով յառաջանալ: Թափօրը մուտք գործեց Մայր Տաճար, ուր Աւետարանի ընթերցումով և օրհնութեամբ ներկաները արձակուեցան:

— Ժամ մը ետք, Մայր Տաճարին մէջ սկսաւ Ճրագալոյցի արարողութիւնը, որուն աւարտին, Աւագ Սեղանին վրայ մատուցուեցաւ Ս. Պատարագ: Ժամարարն էր Հոգշ. Տ. Վազգէն Վրդ.: Ապա, Գերշ. Տ. Նորայր Եպս. նախագահեց Ս. Զատկի նախատօնակին՝ որմէ ետք Միաբանութիւնը զգեստաւորեալ և երգեցողութեամբ բարձրացաւ վանքի սեղանատունը:

● Կիր. 3 Մայիս. — Ս. ԶԱՏԻԿ: Գիշերուան ժամը 2ին, Գերշ. Տ. Շնորհք Եպս.ի գլխաւորութեամբ, Միաբանութիւնը լուցեալ լապտերներով մեկնեցաւ Ս. Յարութեան Տաճար: Առաւօտեան ժամերգութիւնը մինչև «Հարց» պաշտուեցաւ Տաճարի մեր վերնամատրան մէջ: Ապա, Միաբանութիւնը, զգեստաւորեալ, իջաւ Ս. Գերեզմանի շրջափակը, ուր կատարուեցաւ եռապարձ մեծահանդէս թափօր՝ Ս. Գերեզմանին և Պատանատեղւոյն շուրջ, նախագահութեամբ Գերշ. Սրբազան Հօր: Մեր թափօրին կը հետևէին Ղպտոց և Ասորւոց թափօրները: Ս. Գերեզմանի դրան կատար-

digitised by A.R.A.R.@

ունեցաւ «Անդաստան»։ Կարճ դադարէ մը ետք մատուցանեցաւ օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը՝ Քրիստոսի կենդանատու Ս. Գերեզմանին վրայ։ Պատարագեց և քարոզեց Գերշ. Տ. Նորայր Եպս., շեշտելով Յարութեան դէպքին կարեւորութիւնը՝ իբրև հիմնաքարը քրիստոնէական հաւատքին։ Ս. Պատարագի ընթացքին բազմաթիւ հաւատացեալներ Հաղորդուեցան։ Վանք վերադարձին, Միաբանութիւնը «Քրիստոս Յարեաւ» շարականը երգելով բարձրացաւ Պատրիարքարան։

— Կէսօրէ վերջ, Մայրավանքի մեծ բակին մէջ տեղի ունեցաւ Զատկական մեծ «Անդաստան»ը, նախագահութեամբ Գերշ. Տ. Սուրէն Արքեպս.ի։

● Բշ. 4 Մայիս. — Յիշատակ մեռելոց: Օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը՝ Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ մատոյց Գերշ. Տ. Շնորհք Եպս.։ Ս. Պատարագէն ետք կատարուեցաւ եռադարձ մեծահանդէս Թափօր Մայր Տաճարին մէջ, գլխաւորութեամբ Գերշ. Տ. Սուրէն Արքեպս.ի, որ, ամպհովանիի տակ, կենաց Փայտի մասունքով կ'օրհնէր Տաճարը խռնուած ուխտաւոր և հաւատացեալ ժողովուրդի բազմութիւնը։ Թափօրական եպիսկոպոսներ ի ձեռին ունէին զաւազաններ, իսկ Հոգշ. Հայրեր՝ սրբոց մասունքներ։ Թափօրէն ետք երգուեցաւ «Ճանապարհ»ը՝ յատկապէս ուխտաւորաց բարի ճանապարհ մաղթելու և «Տէր ողորմեա»։ Ապա, «Օրհնեցէք զՏէր»՝ Ս. Աթոռոյ շարականի երգեցողութեամբ, Միաբանութիւնն և ժողովուրդ բարձրացան Պատրիարքարանի մեծ դահլիճը, ուր Գերշ. Տ. Սուրէն Արքեպս., ուխտաւորաց ուղղած ողջերթի իր ջերմ խօսքերէն ետք բաժնեց բոլորին մէկական Ս. Պատարագի նշխար։

● Գշ. 5 Մայիս. — Գ. օր Ս. Զատկի: Ս. Պատարագը մատուցանեցաւ Մայր Տաճարի Ս. Գըլխադրի մատրան մէջ. Ս. Պատարագէն ետք կատարուեցաւ հոգեհանգստեան պաշտօն՝ բազմաթիւ խնդրամատոյց ուխտաւորներու ննջեցեալներուն համար։

● Կիր. 10 Մայիս. — Նոր Կիրակի (Յիշատակ Նահատակաց): Հանդիսաւոր Ս. Պատարագը, Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ մատոյց և Յարութեան խորհուրդին շուրջ քարոզեց Հոգշ. Տ. Կիւրեղ Վրդ., իր խօսքի աւարտին անդրադառնալով նաև տարագրութեան ճամբուն վրայ ինկած մեր մէկ միլիոն նահատակներու ողբերգական վախճանին։ Ս. Պատարագէն ետք. Մայր Տաճարի գաւթին մէջ կատարուեցաւ հոգեհանգստեան հանդիսաւոր պաշտօն՝ յիշեալ նահատակաց հոգիներուն համար, նախագահութեամբ Գերշ. Տ. Շնորհք Եպս.ի։ Նոյն արարողութիւնը ապա կրկնուեցաւ հին կրատան և Զամ-Թաղի գերեզմանավայրերուն մէջ.

● Շր. 16 Մայիս. — Կէսօրէ վերջ, Գերշ. Տ. Սուրէն Արքեպս. Քէմհաճեանի գլխաւորութեամբ, Միաբանութիւնը «Հրաշափառ»ով մուտք գործեց Ս. Յարութեան Տաճար, ուր պաշտուեցան երեկոյեան ժամերգութիւնն ու նախատօնակը՝ մեր վերնամատրան մէջ։ Ապա կատարուեցաւ Տնօրինական Սրբատեղեաց այցելութեան հանդիսաւոր Թափօր Տաճարէն ներս։ Թափօրապետն էր Հոգշ. Տ. Հայկասեր Վրդ. Գայլաճեան։

● Կիր. 17 Մայիս. — Աշխարհամատրան (Կանաչ Կիրակի): Գիշերային և առաւօտեան ժամերգութիւնները պաշտուեցան ի Ս. Յարութիւն, մեր վերնամատրան մէջ։ Ապա, Գերշ. Տ. Նորայր Եպս. Պողարեան մատոյց օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը Քրիստոսի Ս. Գերեզմանին վրայ և քարոզեց՝ Հայց. Եկեղեցւոյ առաքելականութեան շուրջ և Ս. Պատարագէն ետք նախագահեց Ս. Գերեզմանին առջև կատարուած «Անդաստան»ին։

● Կիր. 24 Մայիս. — Կարմիր Կիրակի: Ս. Պատարագը մատուցանեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնամատրան մէջ. Քարոզեց Հոգշ. Տ. Վազգէն Վրդ. Գըպըրըլեան, բնաբան ունենալով օրուան ճաշու Աւետարանէն «Որոց զբարիս գործեալ իցէ՝ ի յարութիւն կենաց, և որոց զչար արարեալ՝ ի յարութիւն դատաստանաց» (Յովհ., Ե., 29). ու եզրակացուց թէ մարդ պիտի դատուի համաձայն իր գործերուն և ոչ թէ լոկ իր հաւատքին ու ըմբռնումին, վասնզի «հաւատք առանց գործոց մեռեալ է», ու նաև որովհետև քրիստոնէական ճշմարիտ հաւատքին անպայման կ'ընկերանան բարի գործեր.

● Կիր. 31 Մայիս. — Տօն Երեւման Ս. Խաչին: Ս. Պատարագը մատուցանեցաւ Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ։ Քարոզեց Գերշ. Տ. Շնորհք Եպս. Գալուստեան, նիւթ ունենալով օրուան տօնը ու կարգաց, ամենքին հասկնալի լեզուով, Կիւրեղ Երուսաղէմայի Հայրապետի Կոստանդ կայսեր ուղղուած Թուղթը՝ Ս. Խաչի հրաշալի երեւումին առիթով գրուած. Աւագ Խորանին վերև կը տեսնուէր վառ կանթեղներով զարդարուն Ս. Խաչին նշանը.

● Կիր. 7 Յունիս. — Ս. Պատարագը մատուցանեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնամատրան մէջ։ Քարոզեց Հոգշ. Տ. Յովսէփ Վրդ. Մամուր՝ յայտնելով թէ մարդ բաղկացած է երեք գոյացութիւններէ՝ հոգի, մարմին և միտք, որոնց ներդաշնակ համագործակցութեամբ պայմանաւոր է անոր երջանկութիւնը։

● Դշ. 10 Յունիս. — Վաղուան Համբարձման տօնին առթիւ, կէսօրէ վերջ ժամը 2ին, Միաբանութենէն մաս մը, Գերշ. Տ. Շնորհք Եպս.ի գլխաւորութեամբ, բարձրացաւ Ձիթենեաց լեռ, ուր Համբարձման Սրբավայրին վրայ կառուցուած մեր վրանամատրան մէջ պաշտուեցան երեկոյեան ժամերգութիւնն ու նախատօնակը։ Կիրկնագէմին կատարուեցան «Եկեսցէ» և Հսկում՝ ու ապա առաւօտեան ժամերգութիւնը։ Արարողութիւնները աւարտեցան գիշերուան ժամը 10ին:

● Եշ. 11 Յունիս. — ՀԱՄԲԱՐՁՈՒՄՆ ՏԵԱՌՆ: Առաւօտեան ժամը 7ին, Գերշ. Տ. Սուրէն Արք.ի գլխաւորութեամբ, Միաբանութիւնը ինքնաշարժերով բարձրացաւ Ձիթենեաց լեռ ու քիչ ետք «Հրաշափառ»ով մուտք գործեց Համբարձման Սրբատեղին՝ ուր մեր վրանամատրան մէջ հանդիսաւոր Ս. Պատարագը մատոյց և օրուան տօնի

իմաստի մասին քարոզեց Գերշ. Տ. Շնորհք Եպս., յայտնելով թէ երկինքը պիտի բացուի ընդունելու համար նաև բոլոր անոնք՝ որոնք կը հետևին Քրիստոսի քայլերուն։ Քարոզէն ետք, Գերշ. Տ. Սուրէն Սրբազանի նախագահութեամբ, կատարուեցաւ Հայրապետական Մաղթանք՝ Մայր Աթոռոյ Սիսէն Ս. Էջմիածին փոխադրութեան տարեդարձի առթիւ. իսկ Ս. Պատարագէն ետք, Գերշ. Պատարագիչ Սրբազանը նախագահեց Սրբավայրին առջև կատարուած «Անդաստանին»։

● Եր. 13 Յունիս. — Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Ս. Համբարձում վերնամատրան մէջ։

● Կիր. 14 Յունիս. — Երկրորդ Ծաղկազարդ: Երէկ՝ նախատօնակը, այսօր՝ առաւօտեան ժամերգութիւնը պաշտուեցաւ և Ս. Պատարագը մատուցուեցաւ Ս. Հրեշտակապետաց եկեղեցւոյ մէջ։ Քարոզեց Հոգշ. Տ. Կորիւն Վրդ. Մանուկեան, բնաբան ունենալով օրուան ճաշու Աւետարանէն «Հասեալ է ժամ զի փառաւորեսցի Որդի Մարդոյ», մեկնաբանելով իմաստը օրուան տօնին ու անդրադառնալով Ս. Գր. Լուսաւորչի կեանքին հետ աղերս ունեցող հրեշտակի աւանդութեան, բարոյական դասեր հանելով անոնցմէ։

● Եր. 20 Յունիս. — Ս. Պատարագը մատուցուեցաւ Մայր Տաճարի Ս. Առաքելոց վերնամատրան մէջ։

— Կէսօրէ վերջ, Մայր Տաճարին մէջ պաշտուեցաւ Հոգեգալստեան Մեծահանդէս Նախատօնը, իսկ իրիկնադէմին՝ «Եկեսցէ»ի և Հսկման արարողութիւնները։

● Կիր. 21 Յունիս. — ՀՈԳԵԳԱԼՈՒՍՏ: Օրուան հանդիսաւոր Ս. Պատարագը՝ Մայր Տաճարի Աւագ Սեղանին վրայ մատոյց Գերշ. Տ. Սուրէն Արքեպս. և քարոզեց օրուան տօնի մասին, բնաբան ունենալով «Ես ես աղաչեցից զՀայր, և այլ մխիթարիչ տացէ ձեզ»։ Կարդացուեցաւ երեք եպիսկոպոսներու կողմէ յաջորդաբար Ս. Յովհ. Ոսկեբերանի ճառը՝ գրուած առ իւրաքանչիւր դէմս Ս. Երրորդութեան։

● Եր. 27 Յունիս. — Ե. օր Հոգեգալստեան: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի վերայ տանեաց՝ Ս. Հոգւոյն նուիրուած մատրան մէջ։

● Կիր. 28 Յունիս. — Յիշատակ Եղիայի մարգարէին: Ս. Պատարագը մատուցուեցաւ ի Ս. Յարութիւն, մեր վերնամատրան մէջ, ուր քարոզեց Հոգշ. Տ. Թորգոմ Վրդ. Մանուկեան, բնաբան ունենալով Եղիա մարգարէին երկինք վերանալու պահուն իր աշակերտ Եղիսէի տուած պատասխանը. «Եթէ տեսանես ուզածդ քեզ պիտի տրուի», յայտնելով նաև թէ որո՞նք պէտք է ըլլան մեր թշնամիները և ի՞նչպէս պէտք է սիրել զանոնք։

— Կէսօրէ վերջ, Ս. Հրեշտակապետաց եկեղեցւոյ մէջ պաշտուեցաւ Ս. Հռիփսիմեանց նախատօնակը։ Հանդիսապետն էր Գերշ. Տ. Սուրէն Արքեպիսկոպոս։

● Բշ. 29 Յունիս. — Ս. Կուսանաց Հռիփսիմեանց: Առաւօտեան ժամերգութիւնը պաշտուեցաւ ի Ս. Հրեշտակապետս, իսկ Ս. Պատարագը մատուցուեցաւ եկեղեցւոյ աւանդատան՝ Ս. Հռիփսիմեանց մատրան մէջ։

## ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ

● Ուր. 24 Ապրիլ. — Ս. Զատկի տօնին առթիւ, Պէյրութէն Ս. Աթոռ ժամանեցին Հոգշ. Տ. Վաչէ Վրդ. Յովսէփեան և Հոգշ. Տ. Գիւտ Վրդ. Նագգաշեան։ Հոգշ. Հայրերը ներկայ եղան և իրենց մասնակցութիւնը բերին Զատկական մեր հանդիսութեանց և տօներէն ետք վերադարձան Պէյրութ։

● Կիր. 26 Ապրիլ. — Առաւօտուն, Հաբէշայ Վեհ. Թագուհին, որ ուխտաւորաբար ժամանած էր Ս. Քաղաք, այցելեց Ս. Յարութեան Տաճար։ Մոմավաճառներու փողոցին ծայրէն մեր Աւագ Թարգմանը և դաւազներ առաջնորդեցին զայն եկեղեցի՝ ուր Գերշ. Տ. Շնորհք Եպս., Հոգշ. Տ. Կիւրեղ Վրդ. և Տաճարին Տեսուչը՝ Հոգշ. Տ. Լևոն Արդ. ընդունեցին Վեհ. այցելուն։ Առաջնորդեցին զայն Պատանատեղի, Գողգոթայի ստորոտը և Ս. Գերեզման։

— Ն. Վսեմ. Թագուհին այցելեց նաև Գեթսեմանիի Ս. Աստուածածնայ և Բեթղեհէմի Ս. Ծննդեան տաճարները, ուր դիմաւորուեցաւ նմանապէս Սրբավայրերու տեսուչներուն կողմէ։

● Դշ. 29 Ապրիլ. — Ընդառաջելով Կառավարութեանս Տպագրութեանց Ընդհանուր Տնօրէնութեան հրաւէրին, Ամպասատոր պանդոկին մէջ, ի պատիւ Երուսաղէմի թղթակիցներու սարքուած ճաշկերոյթին ներկայ գտնուեցան Հոգշ. Տ. Հայկասեր Վրդ. Պայրամեան և Տիար Կ. Հինդլեան։

● Եր. 2 Մայիս. — Նորին Վեհափառութիւն Հիւսէյն Թագաւորի արտասահման կատարած շրջապտոյտէն ապահով վերադարձի ուրախ առիթով, Վանքիս աւագ մուտքը պատշաճ կերպով զրօշազարդուած էր և լուսաւորուած մնաց երեք գիշերներ։

— Կ. վ. ժամը 4ին, Ն. Վ. Թագաւորի յաղթական վերադարձի առիթով, Երուսաղէմի Քաղաքապետական կազմը Օրիէնթ պանդոկի մէջ ընդունելութիւն մը սարքած էր, որուն ներկայ գտնուեցաւ Ս. Աթոռոյս Գործոց Ընդհ. Վարիչ Գերշ. Տ. Սուրէն Արքեպս. Քէմհաճեան, ընկերակցութեամբ Հոգշ. Տ. Հայկասեր Վրդ.ի և Տիար Կարպիս Հինդլեանի։

— Հաբէշայ Վսեմափայլ Թագուհիի Ս. Քաղաք ուխտի գալուն բարեպատեհ առթիւ, Ամերիկեան Քոլոնի պարիզպալուստի գացին, յանուն Պատրիարքարանիս, Գերշ. Տ. Տ. Սուրէն և Շնորհք Սրբազաններ, Հոգշ. Տ. Տ. Հայկասեր և Վաչէ վարդապետներ և Տիար Կարպիս Հինդլեան։

● Կիր. 3 Մայիս. — Գիշերուան ժամը 8ին, Ն. Վեհ. Հիւսէյն Թագաւորի իր երկիրը վերադարձի ուրախ առիթով, Վսեմ. Վարչապետին կողմէ, Հիւսէյն Ակումբին մէջ տրուած ճաշկերոյթին ներկայ եղաւ Գերշ. Տ. Սուրէն Արքեպս., ընկերակցութեամբ Հոգշ. Տ. Վազգէն Վրդ.ի։

● Բշ. 4 Մայիս. — Ծերակուտականներու Խորհրդարանի Նախագահին հրաւէրին ընդառա-

digitised by A.R.A.R.@

ջելով, ի պատիւ Ն. Վ. Հիւսէյն Թագաւորին՝ իր ուրախառիթ վերադարձի առթիւ տրուած ճաշկերոյթին, յանուն Պատրիարքարանիս, ներկայ գտնուեցաւ Ամմանի Հոգ. Հովիւ Հոգշ. Տ. Արիս Արք. Շիրվանեան։

— Յունաց Ամեն. Ս. Պատրիարքի հրաւէրին ընդառաջելով, ի պատիւ հիւրաբար քաղաքս գտնուող Սերպիոյ Պատրիարք Ամեն. Տ. Գերմանոսի, Համբարձման լերան վրայ տրուած ընդունելութեան ներկայ գտնուեցաւ Գերշ. Տ. Սուրէն Արքեպս., ընկերակցութեամբ Հոգշ. Տ. Վազգէն և Հոգշ. Տ. Յովսէփ վարդապետներու և Տիար Կարպիս Հինդլեանի։

● Գշ. 5 Մայիս. — Ս. Զատկի տօնին առթիւ, Գերշ. Տ. Սուրէն Արքեպս.ի գլխաւորութեամբ, Միաբանութիւնը շնորհաւորութեան գնաց Յունաց Ամեն. Ս. Պատրիարքին։ Այս. Միաբանութենէն մաս մը շնորհաւորութեան գնաց Ղպտոց Գերշ. Եպս.ին, Ասորւոց վանքի Հոգշ. Տեսչին և Հաբէշաց Գերշ. Եպս.ին։

— Նոյն օր, Պատրիարքարան շնորհաւորութեան եկան Յունաց և Լատինաց Ամեն. Ս. Պատրիարքները, Ֆրանչիսկեանց Գերշ. Կիւսթոսը, Ղպտոց և Հաբէշաց Գերշ. Եպս.ները և Ասորւոց Հոգշ. Մեծաւորը՝ իրենց Միաբանութեան անդամներով, Պապական Նուիրակը, Անգլիքան երկու Գերշ. Եպս.ները, Լուտերականներու երէցը, Յոյն Կաթոլիկ Պատր. Փոխանորդը, Վեհ. Քաղաքապետը՝ քաղաքապետական կազմով, և այլ ականաւոր անձնաւորութիւններ։

— Զինուորական Ընդհ. Հրամանատարութեան հրաւէրին ընդառաջելով, Ն. Վ. Հիւսէյն Թագաւորի Արքունիք վերադարձի ուրախ առթիւ, Զարքայի Սպայակոյտի ակումբին մէջ տրուած ճաշկերոյթին ներկայ գտնուեցան Գերշ. Տ. Սուրէն Արքեպս. և Հոգշ. Տ. Թորգոմ Վրդ.։

● Եշ. 7 Մայիս. — Յանուն Միաբանութեան, Յորդանանի Նորընտիր Դահլիճի 10 Նախարարաց շնորհաւորական հեռագիրներ ղրկուեցան Գերշ. Տ. Սուրէն Արքեպս.ի կողմէ, որոնց ի պատասխան բոլորէն ալ ստացուեցան փոխադարձ շնորհակալական հեռագիրներ և նամակներ։

— Տէր և Տիկին Անվար Նուսէյպէի հրաւէրին ընդառաջելով, ի պատիւ Ամերիկեան Բարեկամներու Նախագահ Տիար Հարօլտ Մայնըրի և իր տիկնոջ, Օրիէնթ պանդոկի մէջ տրուած ընդունելութեան ներկայ եղան Գերշ. Տ. Սուրէն Արքեպս., Հոգշ. Տ. Վազգէն Վրդ. և Տիար Կ. Հինդլեան։

● Շբ. 9 Մայիս. — Կէսօրին, քաղաքիս կառավարիչ Ն. Վ. Հասան էլ-Քէթիպ, ընկերակցութեամբ Վեհ. Մութասարըֆին և Ոստիկանապետին, Ս. Զատկի տօնին առթիւ շնորհաւորութեան եկաւ Պատրիարքարան։

● Կիր. 10 Մայիս. — Գերշ. Տ. Սուրէն Արք., ընկերակցութեամբ չորս հոգեւոր Հայրերու, մեկնեցաւ Ամման և շնորհաւորական այցելութիւն տուաւ Նորընտիր Վարչապետ Ն. Վ. Հազզա էլ-Մէճէլիի և իր բոլոր Նախարարներուն։

● Բշ. 11 Մայիս. — Կ. ա. ժամը 10.30ին, քաղաքիս Բրիտանական Նոր Հիւպատոս Պր. Մարթին Եանկ, Հիւպատոս Պր. Պրաչին հետ այցելեց Պատրիարքարան։

— Նոյն օր, Ս. Տեղեաց և Հին Քաղաքի Ոստիկանապետ Սատըգ Պէյ՝ Ս. Զատկի շնորհաւորութեան եկաւ Գերշ. Տ. Սուրէն Արքեպս.ի։

● Բշ. 18 Մայիս. — Յորդանանի ՈւՆՐՈւայի Տնօրէն Պր. Դըլարքի հրաւէրին ընդառաջելով, ի պատիւ ՈւՆՐՈւայի Ընդհ. Տնօրէն Պր. Տէվիսի և իր տիկնոջ, Ամպասատոր պանդոկի մէջ տրուած ընդունելութեան ներկայ եղան Գերշ. Տ. Սուրէն Արքեպս., Հոգշ. Տ. Տ. Հայկասեր և Վազգէն վարդապետներ և Տիար Կարպիս Հինդլեան։

● Եշ. 21 Մայիս. — Քաղաքիս «Սապէնա» Պելճիքական օդանաւային ընկերութեան տնօրէնութեան հրաւէրին ընդառաջելով, Միջին Արեւելքի Ընդհ. Տնօրէն Տիար Ճօզէֆ Փաքուօթի և իր տիկնոջ ի պատիւ, Ամպասատոր պանդոկի մէջ տրուած ճաշկերոյթին ներկայ եղաւ Գերշ. Տ. Սուրէն Արքեպս., հետն ունենալով Հոգշ. Տ. Վազգէն Վրդ.ը և Տիար Կարպիս Հինդլեանը։

— Նոյն օր, Ժընէվի Գաղթականաց Գրասենեակի փոխ-Տնօրէն Պր. Ժիլպէր Եակէր այցելեց Պատրիարքարան և երկար խօսակցութիւն ունեցաւ Գերշ. Տ. Տ. Սուրէն և Շնորհք Սրբազաններու հետ, գաղթականաց համար շինուելիք շէնքի մը կապակցութեամբ։ Յաջորդ օր, Պր. Եակէր սեղանակից եղաւ Սրբազաններուն։

● Բշ. 25 Մայիս. — Յորդանանի Անկախութեան 13րդ տարեդարձի առթիւ, Խաւուի բանակատեղիին մէջ կատարուած զինուորական մեծ տողանցքին ներկայ գտնուեցան Գերշ. Տ. Շնորհք Եպս. և Հոգշ. Տ. Հայկասեր Վրդ.։

— Գերշ. Սրբազան ու Հոգշ. Հայրը ներկայ եղան նաև, նոյն առթիւ, Զարքայի Սպայակոյտի ակումբին մէջ, Պաշտպանութեան Նախարարութեան կողմէ, ընդ հովանեաւ Ն. Վ. Թագաւորին տրուած երեկոյեան ճաշկերոյթին։

● Գշ. 26 Մայիս. — Ամերիկայի Միացեալ Նահանգաց Արտաքին Գործոց Նախարար Տալըսի մահուան առթիւ, Ամերիկեան Հիւպատոսարան ցաւակցութեան գացին Գերշ. Տ. Սուրէն Արքեպս. և Գերշ. Տ. Շնորհք Եպս., և ընդունուեցան Գենպան Պր. Ֆրանքլինի և Հիւպատոս Պր. Քիլկորի կողմէ։

● Դշ. 27 Մայիս. — Անգլիական զոյգ Հիւպատոսները և Պելճիքական Հիւպատոսը իրենց տիկիններով վանքս այցելեցին և իրենց ցոյց տրուեցան Գանձատան ինչ ինչ առարկաներ։ Ապա պատուասիրուեցան թէյով Պատրիարքարանիս խորհրդարանին մէջ։

● Կիր. 31 Մայիս. — Քաղաքիս Յոյն-Կաթոլիկ Պատրիարքութեան Ընդհ. Փոխանորդ Գերշ. Արքիմանտրիթ Ճիպրայիլ Աբու-Սաատայի քահանայութեան 25ամեայ Յոբելեանին առթիւ, իրենց տաճարին մէջ կատարուած Ս. Պատարագի խորհուրդին ներկայ եղան Հոգշ. Տ. Հայկասեր Վրդ. և Տիար Կարպիս Հինդլեան։

— Նոյն առթիւ, Յոյն-Կաթոլիկ համայնքի

digitised by A.R.A.R.@

կողմէ, ի պատիւ իրենց Պատր. Փոխանորդին, Սէնթ Անի մէջ սարքուած ընդունելութեան ներկայ եղան Գերշ. Տ. Սուրէն Արքեպս., Հոգշ. Տ. Հայկասեր Վրդ. և Տիար Կարապետ Հինդլեան։

● Շբ. 6 Յունիս. — Կրթական Նախարարութեան կողմէ տրուած հրաւէրին ընդառաջելով, քաղաքիս կառավարական դպրոցներու տարեկան Դաշտահանդէսին ներկայ եղան Գերշ. Տ. Սուրէն Արքեպս. և Հոգշ. Տ. Վազգէն Վրդ.։

— Կ. Ե. ժամը 3.30ին, Գերշ. Տ. Շնորհք Եպս., ի գլուխ Միաբանութեան, բացումը կատարեց Ս. Թարգմ. Վարժարանի տարեկան Պազարին։

● Եշ. 11 Յունիս. — Կ. Ե. ժամը 5ին, Հոգշ. Տ. Անուշաւան Վրդ. Զգջանեան ներկայ եղաւ Դոմինիկեաններու վանքին մէջ տրուած բանախօսութեան մը՝ «Յունաստանի և Աթոսի շուրջ»։

● Շբ. 13 Յունիս. — Ն. Վ. Էլիզապէթ Բ. Թագուհիի ծննդեան տարեդարձի առթիւ, Բրիտանական Ընդհ. Հիւպատոսի և իր տիկնոջ կողմէ, իրենց հիւպատոսարանին մէջ տրուած ընդունելութեան ներկայ եղան Գերշ. Տ. Սուրէն Արքեպս., Հոգշ. Տ. Թորգոմ Վրդ. և Տիար Կ. Հինդլեան։

● Դշ. 16 Յունիս. — Իսլամաց Գուրպան պայրամի տօնին առիթով, Գերշ. Տ. Սուրէն Արքեպս., հետն ունենալով Հոգշ. Տ. Տ. Հայկասեր և Վազգէն վարդապետները, շնորհաւորութեան գնաց Վեհ. Կառավարչին, Զինուորական Հրամանատարին, Ընդհ. Ոստիկանապետին և Սաուտի Արաբիոյ Ընդհ. Հիւպատոսին, իսկ Լիբանանեան Հիւպատոսին և Վեհ. Մուֆթիին քարտեր յանձնեցին։

● Եշ. 22 Յունիս. — Առաւօտեան ժամը 8ին, Գերշ. Տ. Սուրէն Արքեպս., ի գլուխ Միաբանութեան, բացումը կատարեց Ժառ. Վարժարանի և Ընծայարանի և ապա Ս. Թարգմանչաց Երկրորդական Վարժարանի Ամավերջի Քննութեանց։

— Վերջապէս Յունաց Պատրիարքարանն ալ ստորագրեց Ս. Յարութեան Տաճարի Նորոգութեան ակնկալու համաձայնագիրը, որ ամիս մը առաջ պատրաստուած և երկու շաբաթներ առաջ մեր և Լատինաց կողմէ ստորագրուած էր։ Մանրամասնութիւնք յառաջիկային։

● Դշ. 24 Յունիս. — Քաղաքիս Սէնթ Ճօն ակնաբուժարանի վարչութեան հրաւէրին ընդառաջելով, Հոգշ. Տ. Տ. Հայկասեր և Կորիւն վարդապետներ ներկայ գտնուեցան, Սուրբին տօնին առիթով, Հիւանդանոցի պարտէզին մէջ տրուած թէյասեղանին։

— Նոյն ատեն, Հոգշ. Տ. Անուշաւան Վրդ. և Հոգշ. Տ. Դաւիթ Աբղ. ներկայ եղան, Կառավարութեան կողմէ, Ալճերիոյ ի նպաստ, Սինեմա Համրայի մէջ տրուած բանախօսութեան։

● Ուր. 26 Յունիս. — Գերշ. Տ. Սուրէն Սրբազան և Տիար Կարապետ Հինդլեան վերադարձան Իսրայէլէն՝ ուր կը գտնուէին երեք օրեր վանական-վարչական գործերով։

● Կիր. 28 Յունիս. — Կ. Ե. ժամը 4ին, Հոգշ. Տ. Տ. Հայկասեր և Կիւրեղ վարդապետներ ներկայ եղան Շմիդ Աղջկանց Գոլէճի Ամավերջի Հանդէսին և մրցանակաբաշխութեան՝ որուն կը նախագահէր Երուսաղէմի Վեհ. Կառավարիչը։

● Դշ. 30 Յունիս. — Կէսօրէ վերջ, Զինադուլային Յանձնախումբի պետ Մէյճր Ճէնէրալ Կարլ Ֆօն Հորնի և Տէր և Տիկին Հէնրի Վիժիէրի հրաւէրին ընդառաջելով, Զինադուլային ապարանքին մէջ տրուած ընդունելութեան ներկայ եղան Գերշ. Տ. Սուրէն և Տ. Շնորհք Սրբազաններ, Հոգշ. Տ. Վազգէն Վրդ. և Տիար Կ. Հինդլեան։

## ՏԱՐՈՒԱՆ ՈՒԽՏԱՒՈՐՈՒԹԻՒՆԸ

Հակառակ Մերձաւոր Արևելքի մէջ տիրող ուխտաւորութեան համար ոչ-նպաստաւոր կացութեան, այս տարի ևս ունեցանք բաւական մեծ թիւով ուխտաւորներ։ Անոնց թիւը անցաւ հազարը։ Եկած էին գլխաւորաբար Լիբանանէն և Սուրիայէն։ Ուխտաւորաց ընդունելութեան համար կազմուած էր մասնաւոր յանձնախումբ մը՝ բաղկացած Տ. Տ. Հայկասեր, Կորիւն, Թորգոմ, Անուշաւան և Վազգէն վարդապետներէ։ Ինչպէս ասկէ առաջ քանիցս շեշտած ենք, վանուցս գլխաւոր դժուարութիւնը ուխտաւորաց համար բնակարան հայթայթելու խնդիրն է. ուխտաւորաց համար շինուած բոլոր սենեակները և խուցերը գրաւուած ըլլալով գաղթականներէ։ Հակառակ այս իրողութեան, բոլոր ուխտաւորներն ալ մի կերպ պատսպարուեցան։ Թարգմանչաց վարժարանը և Ժառ. վարժարանի շէնքերէն մին այս նպատակին յատկացուեցան։ ՈՒՆՐՎԱ կոչուած միջազգային կազմակերպութենէն 25 վրաններ բերուեցան և Ժառ. վարժարանի գաւիթին մէջ լարուեցան։

Ուխտաւորները Սրբավայրեր առաջնորդելու համար կազմուած յանձնախումբի կարգադրութեամբ, և նախապատրաստուած ծրագրի մը համաձայն, ուխտաւորներ խումբ առ խումբ առաջնորդուեցան Տնօրինական բոլոր Սրբավայրերը, Բեթղեհէմ, Յորդանան գետ, Մեռեալ ծով, Փրկութեան լեռ և Երիքով, Ձիթենեաց լեռ, Աստուածածնայ տաճարը որ ի Գեթսեմանի, Խաչի ճամբան, ևայլն։ Պտտեցան ու ծանօթացան Մայրավանքի ներքին եկեղեցիները — Ս. Յակոբ, Ս. Թորոս, Ս. Հրեշտակապետ։ Առաջնորդուեցան վանուցս կրթական ու մշակութային հաստատութիւնները — Պատրիարքարան, Մատենադարան, Ժառանգաւորաց վարժարան, ևայլն։ Ուշ ժամանած ուխտաւորներ զրկուած չմնացին վերոյիշեալ պատեհութիւններէն. իրենց համար ևս մասնաւոր կարգադրութիւն եղաւ որ այցելեն վերոյիշեալ Սրբավայրերէն գէթ կարևորագոյնները։ — Կ՚ենթադրենք որ մեկնեցան հոգեպէս կազդուրուած, հաղորդուած ըլլալով Սրբավայրերէն եկած շնորհներուն և իրենց հայրերէն մնացած մշակութային և հոգևոր ժառանգութեանց ազդած մաքուր պարծանքին։

digitised by A.R.A.R.@

## ԵՐԳԱՀԱՆԴԷՍ

### Ս. ԹԱՐԳՄԱՆՉԱՑ ՎԱՐԺԱՐԱՆԻ

29 Ապրիլ, Աւագ Չորեքշաբթի երեկոյեան ժամը 7.30ին Ցերեկներու դպրոցի ընդարձակ սրահին մէջ տեղի ունեցաւ Ս. Թարգմանչաց Երկրորդական վարժարանի երգահանդէսը՝ կատարողութեամբ վարժարանի երկսեռ ուսանողութենէն կազմուած երգչախումբի մը՝ զոր կը ղեկավարէր Պր. Սահակ Գույումճեան։ Հանդէսին կը նախագահէր Ս. Աթոռոյս Գործոց Ընդհ. Վարիչ Գերշ. Տ. Սուրէն Արքեպս.։ Ներկայ էր բազմաթիւ Միաբանութիւնը, ինչպէս նաեւ հոծ բազմութիւն ժողովրդեան։

Երգչախումբին կողմէ կատարուած խմբերգներէն զատ տեղի ունեցան նաեւ մեներգներ՝ որոնց դաշնակի վրայ կ'ընկերակցէր Ժառ. Վարժարանի երաժշտութեան ուսուցիչ Պր. Վահէ Գույայճեան։

Հանդէսի աւարտին, Գերշ. Սրբազանը քաջալերական եւ գնահատական խօսքեր ըսելէ ետք բոլոր անոնց՝ որոնք իրենց մասնակցութիւն բերին այս ձեռնարկի կատարման, փակեց հանդէսը Տէրունական աղօթքի երգեցողութեամբ։

## ՏԱՐԵԿԱՆ ԴԱՇՏԱՀԱՆԴԷՍ

### Ս. ԹԱՐԳՄԱՆՉԱՑ ՎԱՐԺԱՐԱՆԻ

Կիրակի, 14 Յունիսի կէսօրէ վերջ ժամը 4ին, Ժառանգաւորաց վարժարանի մարզադաշտին վրայ տեղի ունեցաւ Ս. Թարգմանչաց Երկրորդական վարժարանի տարեկան Դաշտահանդէսը՝ նախագահութեամբ Ս. Աթոռոյս Գործոց Ընդհ. Վարիչ Գերշ. Տ. Սուրէն Արքեպս.ի։ Ներկայ էր Միաբանութիւնը եւ ժողովուրդի ստուար բազմութիւն։

Մարզահանդէսը սկսաւ երկսեռ մարզիկներու տողանցքով եւ արքայական քայլերգով, որմէ յետոյ գործադրուեցաւ երկու ժամեր տեւող մարզական յայտագիր մը, բաղկացած 50 — 600 մեթր վազքերէ, երկար եւ բարձր ոստումներէ, մարզանքներէ, դրօշարշաւէ, զուարճալիքներէ, պարանաձգութենէ, եւայլն, որոնց մէկ մասին իրենց մասնակցութիւնը բերին ուսանողուհի մարզիկները՝ որոնք մանչերու նման բաժնուած էին երկու խումբերու։

Խաղերու աւարտին, յաջող մարզիկները, ինչպէս նաեւ տարւոյն ընթացքին ֆութպոլի, պասքէթ-պոլի, վոլի-պոլի եւ փինկ-փոնկի խաղերու մէջ առաջին հանդիսացողները պարգեւատրուեցան բաժակներով ու մետալներով՝ Գերշ. Նախագահ Սրբազանէն։


## 1959-Ի «ՍԻՈՆ» ԿԸ ՆՈՒԻՐԵՆ

Երուսաղէմէն

Հոգշ. Տ. Ներսէս Վրդ. Բաղտասարեան՝ Տիար Սարգիս Բաղտասարեանին (Անթիլիաս)։

Պոլսէն

Տիար Լեւոն Յովհաննէսօֆ՝ (3 տարուան «Սիոն» կը նուիրէ) Տիար Ստեփան Յովհաննէսօֆին (Լոնտոն)։

ՇՈՒՏՈՎ ԼՈՅՍ ԿԸ ՏԵՍՆԷ՝

## ԺԱՄԱԳԻՐՔ

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑՒՈՅ

(Փոքրածաւալ)

ՄԱՄԼՈՅ ՏԱԿ Է՝

## ՄԱՅՐ ՑՈՒՑԱԿ ՁԵՌԱԳՐԱՑ ՍՐԲՈՑ ՅԱԿՈԲԵԱՆՑ

ՀԻՆԳԵՐՈՐԴ ՀԱՏՈՐ

Կազմեց՝ ՆՈՐԱՅՐ ԵՊՍ. ՊՈՂԱՐԵԱՆ


digitised by A.R.A.R.@